Ուսումնական վարժություն 1. Խորհրդածությունը և անձնական հայտնությունը

Ի՞նչ եք սովորել ձեր կյանքում հայտնություն ստանալու մասին: Հելաման 10 գլխի առաջին մասում իմանում ենք Նեփիի փորձառության մասին, երբ նա Աստծուց հայտնություն և զորություն ստացավ: Նեփիի օրինակը մեզ ուսուցանում է, թե ինչպես կարող ենք մեծացնել Տիրոջից հայտնություն ստանալու և այն ճանաչելու մեր կարողությունը:

Կարդացեք Հելաման 10.1–3 հատվածները և փնտրեք, թե ինչն էր առաջնորդում Նեփիին ստանալու հայտնություն Տիրոջից:

Նշեք *խորհել* բառը 2 և 3 հատվածներում: Կարող եք այդ բառը նշել ձեր սուրբ գրություններում:

Ճշմարտություններից մեկը, որ կարող ենք սովորել այս հատվածներից, այն է, որ Տիրոջ գործերի մասին խորհելը պատրաստում է մեզ հայտնություն ստանալու համար:

- Ինչպե՞ս կարող եք նկարագրել խորհդածությունը որևէ մեկին, ով չգիտի, թե ինչ է դա:
- Խորհելն ինչպե՞ս կարող է օգնել մեզ հայտնություն ստանալ:

Տասներկու Առաքյալների Քվորումից նախագահ Մ. Ռասսել Բալլարդն ուսուցանել է.

> Կարևոր է լուռ մնալ, լսել և հետևել Հոգուն: Մեր ուշադրությունը շեղող ուղղակի չափից շատ բան կա այժմ, քան երբևէ եղել է աշխարհի պատմության մեջ:
>
> Յուրաքանչյուրին խորհրդածելու և մտորելու ժամանակ է անհրաժեշտ: Նույնիսկ աշխարհի Փրկիչն Իր մահկանացու ծառայության ընթացքում ժամանակ էր գտնում դա անելու: (Մ. Ռասսել Բալլարդ, «Դադարեցէք եւ ճանաչեցէք, որ ես եմ Աստուած» [Եկեղեցու կրթական համակարգի հոգևոր հավաք երիտասարդների համար, 4-ը մայիսի, 2014 թ.], broadcasts.ChurchofJesusChrist.org)

- Ի՞նչն է շեղում ուշադրությունը և դժվարացնում խորհել հոգևոր բաների մասին:
- Որո՞նք են «Տիրոջ մի քանի գործերը», որոնց շուրջ խորհելու համար կարող եք ժամանակ հատկացնել:
- Ի՞նչ փորձառություններ եք ունեցել կամ գիտեք, երբ խորհելը հանգեցրել է հայտնության:

Մտածեք, թե ինչ նպատակ կարող եք սահմանել՝ այս ճշմարտությունը ձեր կյանքում կիրառելու համար: Կարող եք ձեր նպատակը գրանցել ձեր օրագրում:

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD60013873_201_363-teacher_handout-1